Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/44188/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

25 դեկտեմբերի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԷԼԻՏԲԱՍ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ 2023թ. դեկտեմբերի 8-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ «Վազտրանս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԷԼԻՏԲԱՍ» ՍՊ ընկերությունը 2023թ. դեկտեմբերի 19-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ 2023թ. դեկտեմբերի 8-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ «Վազտրանս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են տրամադրվել 2023թ. դեկտեմբերի 20-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԷԼԻՏԲԱՍ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ 2023թ. դեկտեմբերի 8-ի թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ «Վազտրանս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Թիվ ԵԴ2/44188/02/23 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. փետրվարի 2-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ